ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՆԻՍՏ ԹԻՎ 13 ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 130

«05» նոյեմբերի 2019թ. ք. Էջմիածին

ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2016Թ. «ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, 82-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ղեկավարի առաջարկությունը

Էջմիածին համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Էջմիածին քաղաքի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Էջմիածին համայնքի ավագանու 19.12.2016թ-ի «Էջմիածին քաղաքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» թիվ 34-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ	Հ/Հ	Ազգանուն Անուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Ավետիսյան Հրայր				6.	Հայրապետյան Վարուժան			
2.	Գրիգորյան Վարդան				7.	Ղազարյան Գեորգ			
3.	Զաքարյան Սերգեյ				8.	Մելիքյան Ներսես			
4.	Խաչատրյան Թումաս				9.	Միրզոյան Արամայիս			
5.	Կոնդյան Դավիթ				10	Մովսիսյան Կարեն			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Էջմիածին համայնքի
Ավագանու 05.11.2019թ.
Թիվ 13 նիստի թիվ 130 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն
Հ Ն Գ Ա Մ Յ Ա Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է՝ համայնքի ղեկավար _____ Դ.Գասպարյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 05.11.2019թ. թիվ 130 որոշմամբ

ԷՋՄԻԱԾԻՆ 2019թ.

Սիրելի՛ համաքաղաքացիներ,

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի զարգացմանը խթանելու եւ մատուցվող հանրայ
ծառայությունների մակարդակը բարձրացնելու, քաղաքի եւ բնակչության հանրայ
կարիքները բավարարելուն ուղղված գործառույթներն արդյունավետ իրականացնել
համայնքին վերապահված լիազորությունների սահմաններում դրա առջեւ ծառաց
խնդիրներին ծրագրային եւ համակարգված մոտեցումներ, լուծումներ տալու համար պետք
իրականացնել հեռանկարային ռազմավարություն: Այդ նպատակների իրագործմանն
ուղղված Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքի զարգացման հնգամյա ծրագիրը:

Կարծում եմ՝ ցանկացած էջմիածնեցի ապրում է այն հաճելի գիտակցմամբ, որ ինքը բնակի
է այն հզոր քաղաքի, որն իր վրա է կրում երկար ու ձիգ դարերի կնիքը եւ համայն հայությ
հոգեւոր կենտրոնի պատվաբեր անունը: Սա անչափ հաճելի, բայց միեւնույն ժամանա
պարտավորեցնող զգացում է, որը յուրաքանչյուրիս ստիպում է փայփայելով մեր սուլ
քաղաքի անցյալը եւ լավագույն ավանդույթները, դրա պատմական դեմքը՝ միեւնույն ժամանա
քայլել ժամանակին համընթաց եւ ստեղծել հարմարավետ, անվտանգ եւ ժամանակակ
քաղաք:

Հավատացած եմ, որ փոխադարձ հարգանքով, վստահությամբ եւ համագործակցությա
յուրաքանչյուրն իր տեղում, իր աշխատանքով, իր հնարավորությունների
կարողությունների սահմաններում պարտավոր է կառուցել, շենացնել, հզորացնել
ապագա սերունդներին փոխանցել հազարամյակների պատմություն ունեցող մեր քաղաքը:

Մեր քաղաքում կուտակված խնդիրները բազմաթիվ են եւ դրանք ամենօրյա սրտացավ
օպերատիվ աշխատանք, լուծումներ եւ հստակ քայլեր են պահանջում: Կան բազմաթ
ոլորտներ, որտեղ համակարգային նոր մոտեցումների, բարեփոխումների խիս
անհրաժեշտություն կա: Այս ամենով հանդերձ, մեր աշխատանքի ամենագլխավոր սկզբուն
ու գերակա ուղղությունը լինելու է քաղաքացու շահերի, իրավունքների պաշտպանությունն
կենցաղային եւ կենսական հարմարավետության ապահովումը:

Քաղաքի բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող
բնակչությանը հուզող որոշումների կայացմանը, լսելի դարձնելով բոլոր կարծիքները՝ մեն
կձեւավորենք քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի նոր մոդել:

Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքի հնգամյա զարգացման ծրագրի նպատակն է քաղաքի կայուն եւ համաչափ զարգացման ապահովումը, համայնքի բնակիչների կյանքի որակի բարձացումը, նրանց կենսագործունեության միջավայրի բարեկարգումը եւ բարելավումը, համայնքի պատմամշակութային ժառանգության ծառայեցումը համայնքի կարիքների բավարարմանը՝ դրանով նպաստելով համայնքի ներդրումային գրավչության բարձրացմանն ու բարենպաստ բիզնես-միջավայրի ձեւավորմանը:

Մեր գլխավոր տեսլականն է Վաղարշապատը (Էջմիածին) դարձնել անվտանգ, մաքուր, կանաչապատ, ապրելու եւ գործելու համար հարմարավետ կենսամիջավայր, իսկ այցելուների համար՝ զբոսաշրջության եւ ներդրումային գրավչության կենտրոն:

Այդ նպատակներին հասնելու ճանապարհը հարթ չէ, մեր առջեւ ծառացած են բազմաթիվ խնդրիրներ, բայց միայն համբերատարությամբ, փոխադարձ հարգանքով, վստահությամբ եւ համագործակցությամբ կկարողանանք լուծել դրանք: Վստահեցնում եմ, որ ուժերի ներածին չափով օր ու գիշեր աշխատելով անելու ենք հնարավորն ու անհնարինը մեր բոլորիս նպատակներին եւ երազանքներին հասնելու համար:

Ես հավատում եմ, որ միասնական եւ վստահ քայլերով, համախմբվածությամբ, մեր քաղաքի նկատմամբ սրտացավ եւ հոգատար վերաբերմունքով, անսահման սիրով ու բարձր պատասխանատվությամբ, ազնիվ աշխատանքի ու նվիրումի շնորհիվ ունենալու ենք մեր երազած Վաղարշապատը (Էջմիածին):

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի ղեկավար Դիանա Գասպարյան

ՆԱԽԱԲԱՆ

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է համայնքի զարգացման հիմնական ուղղություններն ու տարածական պլանավորման եւ ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի կանխատեսումները: Զարգացման ծրագրի հիմնական նպատակն է նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները եւ ֆինանսական հնարավորությունները: Հեռահար նպատակը համայնքի կայուն եւ համաչափ զարգացումն է, որին հասնելու հիմնաքայլերը նախանշվում են սույն ծրագրով եւ պետք է արվեն առաջիկա 5 տարիներին: Զարգացման ծրագրի իրականացման արդյունքում կանխատեսվող տեսլականը հետեւյալն է՝

- Նոր որակի քաղաքային միջավայր, առավել գրավիչ բնակիչների, հյուրերի եւ զբոսաշրջիկների համար
- Հոգեւոր մայրաքաղաքին հարիր ճարտարապետական միասնական ոճ, քաղաքի կոլորիտային դիմագիծ
- Միջազգային ստանդարտներին համապատասխան հանգստի գոտիներ եւ այգիներ
- Սմարթ լուծումներ. նորարար տեխնոլոգիաների կիրառում
- Ակտիվ ներդրումային շուկա
- Զարգացած փոքր ու միջին ձեռնարկություններ
- Համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների բաց եւ թափանցիկ կառավարում, բնակիչները մասնակցություն ՏԻՄ տարբեր օղակների որոշումների կայացմանը:

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Ինչպես արդեն վերը նշվեց, այն պայմանավորված է համայնքային ծրագրերի իրականացման եւ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների եւ ենթակառուցվածքների առկայությամբ եւ ներառում է Էջմիածին համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրի բաղադրիչները: Առաջարկվող զարգացման ծրագրում նախանշված է

առաջիկա 5 տարիների համար արդյունքի ռազմավարությունը, ավարտվի ծրագիրը:

սահմանված գերակայությունները եւ այն նպատակային որին ձգտում է հասնել համայնքը կամ որով պետք է

Համայնքի նախանշած գերակայությունները՝ 2019-2023 թվականների համար

Ելնելով համայնքի զարգացման նախանշած տեսլականից՝ Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի 2019-2023 թվականների գերակայություններն են.

1. Հանրային կանաչ տարածքների ավելացումը, նոր հանգստի գոտիների եւ այգիների կառուցումը
2. Ներքաղաքային տրանսպորտի համակարգի ներդնումը եւ տրասպորտային սպասարկման ապահովումը
3. Քաղաքի աղբահանության կազմակերպման համակարգային փոփոխումը
4. Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծումը, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման եւ կարգավորման, նոր աղբավայրի եւ աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովումը
5. «Սմարթ» լուծումների ներդնումը
6. Գործարարության եւ ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը
7. Բնակարանաշինության խթանումը
8. Վաղարշապատի (Էջմիածին) զբոսաշրջային ինքնության ստեղծումը, զբոսաշրջության եւ դրա հետ փոխկապակցված բիզնեսների զարգացումը
9. Պետական, համայնքային եւ մասնավոր գործընկերության ակտիվացումը եւ դրա արդյունավետության բարձրացումը
10. Նախադպրոցական հաստատությունների եւ արտադպրոցական համակարգերի բարեփոխումների շարունակականության ապահովումը, մատչելիության եւ ներառականության հնարավորությունների ապահովումը
11. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձեւավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող եւ բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների, հանրային լսումների, քաղաքապետարանի պաշտոնական կայքում ծրագրերին ծանոթանալու եւ քվեարկելու հնարավորությամբ եւ տեղական հանրաքվեների միջոցով:

10

Զարգացման ռազմավարությունը

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունը համայնքի քաղաքականության, նպատակների եւ ծրագրերի ամբողջությունն է, որոնք ցույց են տալիս, թե ինչ եւ ինչպես պետք է անել համայնքի ցանկալի ապագային հասնելու համար:

Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքի զարգացման 2019-2023 թվականների ռազմավարությունը կառուցված է համայնքի միջոցների, քույր եւ գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության եւ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման եւ կիրառման միջոցով նախանշված արդյունքին հասնելու տեսլականի հիման վրա եւ հետապնդում է կայուն զարգացման նպատակներ: Նախանշած գերակա խնդիրների վերացումը պետք է ուղեկցվի այնպիսի ռազմավարությունների կիրառմամբ, որոնք կնպաստեն տնտեսական աճի խթանմանը եւ մի շարք սոցիալական կարիքների բավարարմանը, այդ թվում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության եւ աշխատանքի հնարավորությունների ոլորտներում՝ միաժամանակ լուծելով կլիմայի փոփոխության եւ շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները: Նոր նպատակները բացառիկ են այնքանով, որ կոչ են անում անցնել գործողությունների՝ խթանելու բարգավաճումը եւ միաժամանակ պաշտպանելու մոլորակը:

Կանաչ եւ շնչող Էջմիածին գործողությունների ծրագիր. մթնոլորտի, օդի մաքրության, կանաչապատ տարածքների պահպանության ու ընդլայնման հիմնախնդիրներ.

«Կանաչ եւ շնչող Էջմիածին» գործողությունների ծրագիրը կառուցված է տեսլական - ռազմավարական նպատակներ – արտաքին տեսք առանցքի շուրջ:

Ծրագիրն ուղղված է համայնքի կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը եւ կանաչապատմանը, աղբահանության, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, ճանապարհային ենթակառուցվածքների օպտիմալացմանը, աղետների ռիսկերի նվազեցման եւ դիմակայունության բարձրացմանը, շրջակա միջավայրի եւ հանրային առողջության պահպանությանը եւ, անշուշտ, արտաքին տեսքի բարելավմանը: «Շնչող քաղաք» ծրագիրը նաեւ զբոսաշրջության տեմպերի աճին խթանող միտում ունի:

Ծրագիրն իրենից ենթադրում է ավելացնել քաղաքի կանաչ գոտիները, այգիները, մայթեզրերի եւ բնակելի շենք-շինությունների բակային հատվածները համալրել նոր ծառատեսակներով, ծաղիկներով, ֆլորայի այլ ներկայացուցիչներով: Շեշտը դրվելու է ծաղկող ծառատեսակների վրա, որոնք ոչ միայն նոր շունչ կհաղորդեն քաղաք արտաքին տեսքին, կհարստացնեն օդը թթվածնով, այլեւ կշարժեն քաղաք այցելող զբաստաշրջիկների հետաքրքրությունը, ինչն իր հերթին կնպաստի քաղաքի հյուրերի թվի աճին: Ծառատեսակներն ընտրվելու են քաղաքի աշխարհագրական դիրքը եւ բնակլիմայական պայմանները հաշվի առնելով:

Առաջիկա տարիներին՝ հրատապ լուծման անհրաժեշտություն ունեն քաղաքի աղբահանության, եւ ընդհանրապես, կենցաղային կոշտ թափոնների կառավարման խնդիրները՝ նոր, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան աղբի վերամշակման գործարանի հիմնման ծրագրերի մշակումը: Նախատեսվում է համակարգային փոփոխություն՝ ավտոպարկի թարմացում, նոր մեծ աղբարկղների տեղադրում, աղբի տեսակավորման աղբամանների տեղադրում (սննդի, պլաստիկի, թղթե թափոնների համար): Նորագույն համակարգի ներդրումը կնպաստի աղբահանման կազմակերպման բարելավմանը, քաղաքի մաքրության պահպանմանը, կոշտ թափոններին երկրորդ կյանք տալու գործընթացին:

Նախատեսվում է էականորեն ավելացնել քաղաքում տեղադրված աղբարկղների թիվը, աղբամաններ տեղադրվել նաեւ բնակելի սեփական տների դիմային մասում:

Ոլորտի բարելավումը պահանջում է նաեւ հետեւողական բացատրական եւ դաստիարակչական աշխատանք քաղաքացիների հետ, ինչն իրականացվելու է տարբեր եղանակներով, օրինակ՝ սոցալական պաստառներով, նախադպրոցական եւ դպրոցական կրթության հաստատություններում տարբեր ծրագրերի կիրառմամբ եւ այլն: Աչքի առաջ ունենալով եվրոպական երկրների կայացած փորձը, մենք կարող ենք ծրագիրն արդյունավետ կիրառել քաղաքում՝ շահավետ գործակցություն ապահովելով նաեւ քաղաքացու եւ համայնքապետարանի միջեւ:

Հետեւողական աշխատանքներ են տարվելու ներդրումների հետ համագործակցության արդյունքում աղբավայրի փակման եւ աղբի վերամշակման գործարան կառուցելու ուղղությամբ:

Նոր որակի քաղաքային միջավայրի ապահովման ճանապարհին հաջորդ մարտավարական քայլը քաղաքի դիմագծի ստեղծումն է:

Յուրաքանչյուր քաղաք ունի տեսանելի եւ զգայական մի շարք ասպեկտներով պայմանավորված դիմագիծ: Հենց սեփական դիմագծով էլ առանձնահատուկ է ամեն մի քաղաք: Լինելով համայն հայության հոգեւոր մայրաքաղաքը Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի գերակա խնդիրներից է քաղաքաշինական միասնական ոճի բացակայությունը եւ բնակելի շենքերի ֆասադների մաշվածությունն ու անհրապույրությունը: Համայնքի 2019-2023 թվականների զարգացման ծրագիրը նախատեսում է համապատասխան ժամանակահատվածում մշակել եւ սահմանել ճարտարապետական միասնական ոճ, ինչպես նաեւ ենթադրում է առաջիկա 5 տարում իրականացնել համայնքի կենտրոնական փողոցներիի բնակելի շենքերի արտաքին հարդարանքի (ֆասադ) վերափոխում՝ միասնականության եւ հոգեւոր մայրաքաղաքի դիմագծի ստեղծման սկզբունքով:

Քաղաքի կենտրոնական հատվածի շենքերի գեղեցկացման եւ փողոցներին լրացուցիչ գրավչություն հաղորդելու նպատակով նախատեսվում է առաջիկա տարիներին գրագետ նախագծմամբ եւ էներգախնայող լուսատուների կիրառմամբ լուսավորել կենտրոնական փողոցների շենքերը՝ դրանով լուծելով նաեւ փողոցների հավելյալ լուսավորման խնդիրը:

Համայնքի խնդիրների եւ առաջիկա 5 տարվա տեսլականի գերակայություններում ամփոփված այս առաջնահերթությունը կարեւոր է ոչ միայն համայնքի բարեկարգման տեսանկյունից, այլեւ հանդիսանում է զբոսաշրջության զարգացման հիմնաքարերից:

Որպես քրիստոնեությունը պետական կրոն ընդունած առաջին պետության հոգևոր կենտրոն Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքն օժտված է զբոսաշրջության ռեսուրսային հզոր ներուժով, որը, սակայն, արդյունավետ չի օգտագործվել եւ չի հանգեցրել քաղաքի տնտեսության զարգացմանը:

Ոլորտի հիմնախնդիրներն են.

1. Հյուրանոցների բացակայություն
2. Զբոսաշրջային ենթակառուցվածքների անհրաժեշտություն
3. Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքի զբոսաշրջային բրենդի բացակայություն

4. Զբոսաշրջիկին անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության եւ զբոսաշրջային քարտեզների, ինտերակտիվ քարտեզներում օտարալեզու կողմնորոշիչ վահանակների բացակայություն,

5. Հանրային զուգարանների բացակայություն

6. PR գործոնի պակաս

Ընդունելով զբոսաշրջությունը որպես տնտեսության զարգացման գերակա ճյուղ, Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի 2019-2023 թվականների զարգացման ծրագրում ներառված բոլոր գերակայությունները փոխկապակցված եւ ուղիղ համեմատական են համայնքում զբոսաշրջության զարգացմանը:

Խնդրի կարգավորման ուղղությամբ ռազմավարական առաջին քայլը բաց, թափանցիկ եւ ապահով ներդրումային դաշտի ձեւավորումն է եւ հյուրանոցային ու ռեստորանային բիզնեսի խրախուսումը: Ծրագիրն առավել քան իրատեսական է, քանզի տեղակայված լինելով մայրաքաղաք Երեւանից ընդամենը 20 կմ հեռավորության վրա, մեծ է հավանականությունը, որ հյուրանոցների ու ռեստորանների առկայության եւ ճիշտ մշակված PR ծրագրի դեպքում զբոսաշրջիկը կնախընտրի տեղակայվել Էջմիածնում՝ ելնելով նաեւ մատչելիության տեսանկյունից (մայրաքաղաքի համեմատ): Քանի որ այս պահին ոլորտի հիմնական խնդիրը ոչ թե զբոսաշրջիկների հոսքի սակավությունն է, այլ զբոսաշրջիկին քաղաքում պահելը, ուստի հյուրանոցային ու ռեստորանային բիզնեսի խթանումը լուծման առանցքային քայլերից կարող է լինել: Այս նպատակով համայնքապետարանը Կառավարության հետ համագործակցությամբ կփորձի Վաղարշապատը (Էջմիածին) դարձնել հյուրանոցային ու ռեստորանային բիզնեսի համար գայթակղիչ եւ շահավետ համայնք:

Միևնույն ժամանակ, համայնքապետարանը ձեռնարկելու է գործուն քայլեր քաղաքում Վերնիսաժ եւ այլ նմանատիպ հարթակներ հիմնելու ուղղությամբ, որը ոչ միայն թույլ կտա տեղական արտադրողներին ու ստեղծագործողներին ներկայացնել եւ իրացնել իրենց աշխատանքները, այլեւ կհանդիսանա արդյունավետ միջոց զբոսաշրջիկների ժամանցը քաղաքում կազմակերպելու ուղղությամբ:

Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի 2019-2023 թվականների զարգացման ծրագրում առաջնային լուծման խնդիր է համարվում նաեւ ներքաղաքային տրանսպորտային համակարգի ներդնումն ու շահագործման ապահովումը:

Քաղաքը չունի համայնքային հասարակական ուղեւորափոխադրումներ իրականացնող ներքաղաքային տրանսպորտ, ոլորտն անգամ ուսումնասիրված չէ: Այս խնդիրը թերեւս բնակչության կողմից ամենից հաճախ բարձրացվողներից է:

Ոլորտի հիմնախնդիրներն են.

1. Ավտոկայանի բացակայություն
2. Ուղեւորափոխադրումներ իրականացնող ներքաղաքային տրանսպորտի բացակայություն
3. Երթուղային ուղեգծերի մշակման անհրաժեշտություն
4. Կանգառների արդյունավետ տեղաբաշխման անհրաժեշտություն

Ելնելով համաքաղաքացիների ցանկություն-պահանջներից, 2018թ-ին համայնքապետարանը հայտարարեց մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի (Էջմիածին) համայնքապետարանի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով: Հաստատվեց Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքի ներքաղաքային միկրոավտոբուսային երթուղիների չվացուցակնե եւ ուղեգծեր: Սակայն հայտերի բացակայության պատճառով մրցույթը չկայացավ:

Խնդրի կարգավորման համար սույն ծրագրով նախատեսվում է այլ ուղի՝ համայնք-մասնավոր /միջազգային/ համագործակցություն: Առաջին հաջող քայլերն արված են: Մասնավորապես, ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության հետ հաստատած բարեկամական փոխհարաբերությունների արդյունքում հնարավոր դարձավ բանակցային կապ հաստատել Ֆրանսիայի Նիցցա քաղաքի հետ: Ծավալված արդյունավետ բանակցության արդյունքում ներկայացվել է քննարկվող խնդիրը եւ Նիցցա քաղաքի քաղաքապետ Պ. Քրիստիան Էստրոզին կողմից ցանկություն է հայտնվել Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքին նվիրել 6 ավտոբուս՝ նպաստելու քաղաքի տրասնսպորտային ցանցի զարգացմանը: Այսպիսով, ներքաղաքային տրասնսպորտային ցանցն արդեն ներդրվել է եւ նախատեսվում է առաջիկայում այլ

արտասահմանյան գործընկեր համայնքների օգնությամբ այն համալրել նոր տրանսպորտային միջոցներով՝ հնարավոր դարձնելու համար քաղաքի բոլոր ծայրամասերի կապը միմյանց եւ կենտրոնի հետ:

Խնդրի լուծմանը հասնելու համար մանրամասն քննարկվում ու հստակեցվում է երթուղիների ու փոխադրումների կազմակերպման գործընթացը:

Քաղաքի խիտ բնակեցումը ստիպում է մտածել էներգախնայող, էկոլոգիապես մաքուր ու անվտանգ քաղաքային միջոցներ կիրառելու եւ ժամանակին համահունչ «Սմարթ քաղաք» ծրագրի ներդրման մասին: Սա իր հերթին կհանգեցնի կառավարման օպտիմալացման եւ ծառայությունների որակի բարելավման: Ուստի, կարեւորելով ժամանակակից քաղաքի զարգացման հարցում նորարար տեխնոլոգիաների կիրառումը քայլեր են ձեռնարկվում քաղքում «սմարթ» լուծումների ներդրման ուղղությամբ:

Առաջիկա 5 տարում այս ուղղությամբ կատարվող քայլերից կլինեն սմարթ այգիների ու խելացի կանգառների կառուցումը:

Սմարթ այգիների հիմնումը նախատեսված է իրականացնել համայնք-քույր քաղաք համագործակցության շրջանակներում, իսկ խելացի կանգառերը՝ մասնավոր հատվածի հետ փոխշահավետ ծրագրերի իրականացման միջոցով:

«Խելացի քաղաք» կոչումը ստանալու համար ոչ պակաս կարեւոր է քաղաքային լուսավորության մաքուր եւ էներգախնայող տեխնոլոգիաների կիրառումը: Այս նպատակով Էջմիածնի փողոցներում, բակերում եւ նրբանցքներում տեղադրված է ավելի քան 2500 կոնսուլային LED լուսատու: Ինչպես նաեւ, Էջմիածնի քաղաքապետարանի կարիքները հոգալու համար տեղադրվել է գումարային 50 ԿՎՏ արևային ֆոտովոլտային կայան: Ծրագրի իրականացման արդյունքում քաղաքապետարանը հնարավորություն ունեցավ էլեկտրաէներգիայի ծախսը կրճատել ավելի քան 65 տոկոսով՝ միևնույն ժամանակ կրճատելով ածխաթթու գազի արտանետումները: Այս ուղղությամբ աշխատանքները առաջիկա 5 տարում եւս կլինեն շարունակական:

Կանաչ եւ շնչող Էջմիածին ծրագրի հաջող ընթացքը հիմք կարող է հանդիսանալ հետագայում Էջմիածինը տարածաշրջանային բացառիկ էկոքաղաք դարձնելու համար:

Խելացի քաղաքների առկայությունը թույլ կտա օպտիմալացնել ենթակառուցվածքները, ծառայությունների մատուցումը, խթանել տնտեսական, սոցիալական, բնապահպանական զարգացումը:

Խելացի քաղաքում նույնքան խելացի ու ակտիվ քաղաքացիներ ունենալու նպատակով կներդրվի «Ակտիվ քաղաքացի» ծրագիրը համայնքապետարանը պաշտոնական կայքում: Վերջինս կխրախուսի մասնակցությունը հանրային որոշումներ ընդունելիս, ինչպես նաեւ քաղաքացու ազդեցությունը քաղաքային այս կամ այն խնդրների լուծման մեջ:

Խելացի տեխնոլոգիաների կիրառումը բնականաբար կնպաստի նաեւ զբոսաշրջության զարգացմանը: Զբոսաշրջության զարգացման խելացի լուծումներ պետք են հետեւյալ ուղղություններով՝ տեսարժան վայրեր, տրանսպորտի հասանելիություն, հյուրանոցի, սննդի, ժամանցի հնարավորություններ, օժանդակ ծառայություններ (բջջային հավելվածների, բանկային, բժշկական, եւ այլն): «Խելացի քաղաք»-ը մշտապես զարգացող քաղաքի տեսակն է, որտեղ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիական մոտեցումները քաղաքացիների եւ քաղաքի հյուրերի անվտանգ եւ հարմարավետ կյանքի պայմանների ապահովման համար:

Հնգամյա զարգացման ծրագրում ներառված գերակայություն է փողոցների եւ մայթերի շարունակական բարեկարգումը, հեծանվուղիների ստեղծումը:

Գաղտնիք չէ, որ Վաղարշապատ (Էջմիածին) համայնքի առջեւ ծառացած լրջագույն խնդիրներից է շատ փողոցներում ասֆալտբետոնե ծածկի բացակայությունը, ինչպես նաեւ քաղաքի տարբեր մասերի փողոցների ասֆատտբետոնե ծածկի ոչ բարվոք վիճակը, որն անհարմարությունների է ստեղծում քաղաքի բնակիչների եւ այցեուների համար, ինչպես նաեւ իր բացասական ազդեցությունն է ունենում բոլոր որորտների վրա, այդ թվում նաեւ՝ տնտեսության: Խնդիրը լուծելու նպատակով համայնքապետարանը առաջիկա տարիների ընթացքում իրականացնելու է ճանապարհների բարեկարգման մեծածավալ աշխատանքներ: Խնդրի լուծման ճանապարհին համայնքապետարանը նախատսում է ակտիվ համագործակցություն Կառավարության հետ՝ սուբվենցիոն եւ համաֆինանսավորվող այլ ծրագրերի տեսքով:

Բացի փողոցներից ու ճանապարհներից, համայնքապետարանի մշտական ուշադրության կենտրոնում են գտնվելու նաեւ մայթերը, որոնց ներկայիս վիճակն անհարմարություններ է ստեղծում մեր համաքաղաքացիների եւ քաղաք այցելած զբոսաշրջիկների համար: Մասնավորապես, առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում է բարեկարգել եւ սալիկապատել քաղաքի կենտրոնական փողոցների մայթերը, ինչպես նաեւ դիտարկել հեծանցվուղիների կառուցման հնարավորությունը:

Հնգամյա զարգացման ծրագրում ներառված գերակայություն է նաեւ բնակարանաշինության խթանումը:

Հաշվի առնելով քաղաքի բնակելի շենքերի հնությունը, սեյսմիկ նորմերին համապատասխան չլինելը եւ, վերջապես, էսթետիկ առումով անհրապուրությունը, քաղաքը կարիք ունի ժամանակակից ճարտարապետության եւ անվտանգության ստանդարտներին համապատասխան բազմաբնակարան շենքի: Բազմաբնակարան շենքեր կառուցելու խնդիրը գերակա է դառնում նաեւ ուրբանիզացիայի տեմպերից եւ դեպի Վաղարշապատ (Էջմիածին) հոսքից ելնելով: Այս առումով նախատեսված քայլերից է գործարարության եւ ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, նորդրումների խրախուսումը եւ պայմանների բարելավումը, ինչպես նաեւ համայնքային իշխանություն-մասնավոր հատված համագործակցության նոր մոդելի ներդնումը:

Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքի զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց դրանում արվեստի ու մշակույթի, կրթության ու սպորտի զարգացման:

Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքն ավանդաբնար եղել է մեր երկրի ամենամշակութային քաղաքներից մեկը: այն Հայաստանին նվիրել է բազմաթիվ շնորհաշատ եւ տաղանդավոր նկարիչներ, քանդակագործներ, երաժիշտներ եւ արվեստի այլ գործիչներ: Առաջիկա տարիներին մշակույթն ու արվեստը մշտապես գտնվելու են քաղաքային իշխանությունների ուշադրության կենտրոնում, կազմակերպվելու են ցուցահանդեսներ, փառատոներ եւ սիմպոզիումներ, որը թույլ կտա ճանաչելիության նոր մակարդակի բարձրացնել տեղի ստեղծագործողներին, ինչպես նաեւ հոգեւոր կենտրոնի հարկի տակ համախմբել տարբեր ազգերի արվեստագետների եւ ստեղծագործողների:

Համայնքապետարանը ակտիվ համագործակցելու է քույր քաղաքների, միջազգային դրամաշնորհային կազմակերպությունների եւ Կառավարության հետ՝ քաղաքում նոր թանգարանների, գրադարանների ու պատկերասարհների կառուցման ծրագրեր իրագործելու նպատակով: Նախատեսվում է նաեւ ներդրողների ներգրավմամբ քաղաքում վերակենդանացնել կինոն:

Արդեն իսկ շոշափելի փոփոխություններ են կատարվել **նախադպրոցական կրթության** բնագավառում, որում շատ կարեւորվում է բարերարների, հովանավորների, տեղական եւ արտասահմանյան գործընկերների գործուն աջակցությունը: Նախատեսվում է առաջիկա տարիների ընթացքում հիմնանորոգել քաղաքում գործող բոլոր նախակրթարանները, դրանք համապատասխանեցնել սահմանված չափանիշներին, բարելավել մատուցվող սննդի որակը, ինչպես նաեւ ապահովել որակյալ եւ բանիմաց մասնագետների ներգրավումը երեխաների կրթության մատուցման ոլորտում: Հատկապես նախակրթարանների շենքային պայմանների բարելավման գործում անչափ կարեւորվում է համագործակցությունը վերը թվարկված բոլոր հատվածների եւ մարմինների հետ:

Վերջապես, առաջիկա տարիներին նախատեսվում է զարգացնել սպորտը՝ զարկ տալով առողջ ապրելակերպի խթանմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, սպորտային փառատոնների անցկացմանը, նոր սպորտաձեւերի ներդրմանը: Նախատեսվում է հովանավորների եւ ներդրողների օգնությամբ ձեռնամուխ լինել քաղաքում ֆուտբոլային մարզադաշտի կառուցմանը եւ գործուն քայլեր ձեռնարկել քաղաքում այդ սպորտաձեւի զարգացման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ